ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/153 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պետք է պատրաստված լինեն պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց: Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2900-3000մմ, լայնությունը՝ 900մմ, վերին հատվածի խորությունը՝ 280մմ, և, 140մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 140x40մմ: Աստիճանաձողերը պետք է լինեն օվալաձև Φ35x50(h)մմ չափերի: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 180մմ: Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 120կգ: Ստորին ձողը պետք է տեղակայված լինի հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 80-100մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը պետք է ունենա կլոր հատվածք՝ Φ40մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից պետք է լինի 400մմ: Վերին ձողանը պետք է լաքապատված լինի բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները պետք է իրականացվեն բարձորակ և ամուր դետալներով՝ հաշվի առնելով մարզադահլիճի առանձնահատկությունները, հատակին հպվող մասի տակ լինեն ռետինե դետալներ և դիմակայեն առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Նմուշը /նկարը/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ

	ժամկետում պետք է շտկել /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Վաճառողի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել Գնորդի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել Գնորդի հետ: Հեռ. 010-599-699 (564) Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ГРУПП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/153 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	